Ր-96

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԻՐՕ ՄՈՒՀԱՄՄԱԴ ՄՈՒՍՏԱՖԱ

# ԱՄԻՆ ԱՌ-ՌԵՅՀԱՆԻԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

Է. 00. 02. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ

ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ
ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ՝
ԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՄԱՆ ՏԵՍՔՈՎ

ԵՐԵՎԱՆ - 1995

Աշխատանքը կատարվել է Հալեպի պետական համալսարանում (Սիրիա)

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ն.Հ. Հովհաննիսյան
պատմական գիտությունների թեկնածու Ա. Հ. Խաչատրյան

Առաջատար կազմակերպություն՝ Երեւանի պետական համալսարանի արեւելագիտական ֆակուլտետի Արաբագիտության ամբիոն

Պաշտպանությունը կայանալու է
''                    1995թ.          ժամը 14.00-ին

ՀՀ ԳԱԱ արեւելագիտության ինստիտուտի 006 մասնագիտական խորհրդում (հասցեն՝ Երեւան, Մարշալ Բաղրամյան պող. 24գ)

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ արեւելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրը առաքված է ''                    1995 թ.

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, պ. գ. թ.          **Ա. Վ. Քոսյան**

## Աշխատության ընդհանուր բնութագիրը

19-րդ դարի վերջին քառորդը-20-րդ դարի առաջին կեսը Արաբական Արեւելքի երկրների համար վերափոխումների եւ արժեքների վերագնահատման շրջան էր: Արաբական հասարակությունը թեւակոխեց պատմական զարգացման նոր փուլ, սասանվեցին պահպանողական-ավանդապաշտական աշխարհաըմկալման հիմքերը, հարցականի տակ դրվեցին իսլամական ուղղափառ դոգմատիկայի եւ սխոլաստիկայի փիրապետող դիրքերը, դրվեցին հասարակական մտքի աշխարհիականացման հիմնաքարերը, ծնունդ առավ արաբների ազգային ինքնագիտակցությունը, թոթափվեց օսմանյան դաժան բռնապետության 400-ամյա գերիշխանությունը եւ արաբ ժողովուրդը թեւակոխեց ազգային անկախության ուղին: Արաբների ազգային-մշակույթային զարթոնքը հանգեցրեց ազգային գաղափարախոսության եւ գաղափարական-քաղաքական տարբեր հոսանքների ձեւավորմանը, նպաստեց արաբական նոր գրականության եւ հասարակագիտության զարգացմանը:
Արաբական հասարակության վերափոխման եւ նոր արժեքների հաստատման հետ կապված բազմաթիվ խնդիրներ իրենց խորը ու համակողմանի արտացոլումն են գտել արաբական նոր գրականության դասական, հայտնի մտածող, հրապարակախոս, փիլիսոփա Ամին-առ-Ռեյհանիի (1876-1940) գրական-հրապարակախոսական հարուստ ժառանգության մեջ: Սրանով էլ բացատրվում է սույն թեմայի ընտրությունը եւ կարեւորությունը:

**ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ.** Ատենախոսության հեղինակը իր առջեւ խնդիր է դրել Ռեյհանիի ստեղծագործությունների եւ այլ սկզբնաղբյուրների վերլուծության հիման վրա լուսաբանել Ռեյհանիի հասարակական-քաղաքական հայացքները, բացահայտել կրոնական գործոնի, աշխարհիկ ռացիոնալ ուսմունքների եւ արաբական իրականության մեջ առկա զանազան գաղափարական հոսանքների դերը նրա հասարակական-քաղաքական աշխարհայացքի ձեւավորման գործում, ցույց տալ ֆրանսիական լուսավորիչների, անգլիացի եւ ամերիկացի ականավոր գրողների ազդեցությունը Ռեյհանիի աշխարհայացքի ձեւավորման, մանավանդ իդեալական հասարակության հիմքերի եւ ելակետների, բարենորոգչական սոցիալիզմի եւ սոցիալական արդարության մասին նրա ըմբռնումների վրա: Ուսումնասիրության խնդիրների մեջ են մտնում նաեւ լուսաբանել Ամին-առ-Ռեյհանիի տեսակետները Արեւելք-Արեւմուտք փոխըմբռնման եւ ներդաշնակության, ինչպես նաեւ իսլամական ռեֆորմացիայի նկատմամբ:

Մարդու բնավորության ձեւավորման գործում Ռեյհանին մեծ տեղ է

պալիս սոցիալական միջավայրին. ուստի եւ ատենախոսության մեջ այդ հարցերի քննարկմանը նույնպես զգալի տեղ է հատկացված:

Աշխատության մեջ ուշադրություն է դարձվում նաեւ Ռեյհանիի փիլիսոփայական աշխարհայացքին: Դրա բնորոշ գիծը ձգտումն էր մատերիալիզմը հաշտեցնել իդեալիզմի հետ:

Եվ, վերջապես. ատենախոսության հեղինակը փորձում է վեր հանել Ռեյհանիի ներդրումը արաբական հասարակական-քաղաքական մտքի ձեւավորման եւ զարգացման մեջ եւ ցույց տալ այն տեղը. որ նա գրավում է դրանում:

ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ. Աշխատությունը Ամին առ-Ռեյհանիի հասարակական եւ քաղաքական հայացքների համակողմանի ուսումնասիրության առաջին փորձն է արաբագիտության մեջ: Առաջին անգամ ցույց է տրվում, որ Ռեյհանիի ստեղծագործության մեջ ներդաշնակորեն միահյուսվել են արեւելքին բնորոշ հոգեւոր բարոյա-էթիկական արժեքները արեւմուտքին բնորոշ առաջադիմական ռացիոնալ քաղաքակրթության արժեքների հետ:

Ատենախոսության կարեւոր նորություններից է եւ այն, որ առաջին անգամ լայնորեն լուսաբանվում են դարաշրջանի արաբական հասարակության ընդերքում տեղի ունեցած տարաբնույթ հասարակական տեղաշարժերը, որոնք արտացոլվել են Ռեյհանիի ստեղծագործությունների մեջ եւ իրենց կնիքը դրել նրա հասարակական-քաղաքական հայացքների ձեւավորման վրա: Աշխատությունում նորովի են մեկնաբանվում արաբ գրողի դիրքորոշումները արաբական միասնության, ազգային գաղափարախոսության, իսլամական ռեֆորմացիայի, սոցիալիզմի, հոգեւոր հեղափոխության, սոցիալական արդարության եւ այլ հարցերի նկատմամբ:

Ատենախոսությունը գրվել է տարաբնույթ աղբյուրների հիման վրա: Որպես սկզբնաղբյուր հեղինակը օգտագործել է Ամին Ռեյհանիի անգլերեն եւ արաբերեն լեզուներով լույս տեսած ստեղծագործությունները, հրապարակախոսական հոդվածները, հրապարակային ելույթների նյութերը, նամակները, նոթերը, որոնք լույս են սփռում Ամին Ռեյհանիի հասարակական-քաղաքական հայացքների եւ աշխարհընկալման տարբեր կողմերի վրա:

Հեղինակը լայնորեն օգտվել է եվրոպական գրականությունից: Դիսերտանտի առջեւ կանգնած խնդիրների լուծմանը նպաստել են արաբ, եվրոպացի եւ խորհրդային հետազոտողների արժեքավոր աշխատություններում, մասնավորապես հայտնի արաբագետ Զ. Ի. Լեւինի՝ արաբական հասարակական մտքի եւ հասարակական-քաղաքական հոսանքների զարգացմանը նվիրված մենագրություններում քննարկված հարցերը:

Եվրոպական գրականության շարքում պետք է հիշատակել Հ. Գիբի, Մ. Վայլդի, Ֆ. Հիթթիի, Կ. Բրոքելմանի, Հ. Բոնի եւ այլ հետազոտողների



աշխատությունները: Արաբ հետազոտողներից սույն ատենախոսության համար օգտակար են Մ. Մուսայի, Ղ. Սալամայի, Լ. Սաբբաղի, Ն. Ազուրիի, Ա. Հուրանիի, Լ. Շեյխոյի, Ա. ադ-Դուրիի, Ս. Իբրահիմի եւ այլոց արժեքավոր ուսումնասիրությունները:

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԻՄՔԸ. Աշխատության մեթոդական հիմքը պատմահամեմատական եւ վերլուծական սկզբունքն է: Արաբական հասարակության ներսում տեղի ունեցող բոլոր երեւույթները եւ գերիշխող միտումները վերլուծվում են համաշխարհային պատմության համաժամանակյա երեւույթների հետ սերտ միասնության մեջ:

ԳԻՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ. Ուսումնասիրվող թեմայի նշանակությունը գլխավորապես պայմանավորված է հետազոտվող հարցերի իրատապությամբ: Ռեյհանիի ստեղծագործությունների քննական վերլուծությունը եւ հասարակական-քաղաքական՝ հայացքների գիտական գնահատականը կնպաստի ճիշտ ըմբռնելու նրա դերը արաբների ազգային ինքնագիտակցության արթնացման, հասարակական մտքի եւ ազգային գաղափարախոսության կազմավորման գործում: Ուսումնասիրության եզրակացությունները եւ հիմնական դրույթները օգտակար են ճիշտ հասկանալու ժամանակակից Մերձավոր եւ Միջին Արեւելքում գոյություն ունեցող գաղափարախոսական զանազան հոսանքների էությունը, իսլամական ռեֆորմացիան, հասարակական-քաղաքական շարժումը: Թեման հետաքրքրություն է ներկայացնում նաեւ արաբական երկրներում արդի փուլում ընթացող քաղաքական գործընթացները, մասնավորապես արաբական միասնության, կրոնա-համայնքային մասնատվածության եւ այլ երեւույթների արմատները պարզաբանելու տեսանկյունից:

Վերջապես թեման կարեւոր է ընդհանրապես հավասարության, սոցիալական արդարության, հումանիզմի, մասնավոր սեփականության, սոցիալիզմի գնահատման եւ այդ արժեքները արաբական միջավայրում կիրառելու հնարավորության տեսակետից:

**ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՐԺԵՎՈՐՈՒՄԸ.** Աշխատության հիմնական դրույթները եւ հարցերը հրապարակվել են առանձին հոդվածների ձեւով: Ուսումնասիրվող թեմայի շուրջ հեղինակը գիտական զեկուցումներ է կարդացել տարբեր գիտական կոնֆերանսներում, դասախոսություններով հանդես է եկել Սիրիայի մի շարք գիտական հաստատություններում:

Ատենախոսությունը քննարկվել եւ պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ Արեւելագիտության ինստիտուտի Արաբական երկրների եւ Թուրքիայի բաժինների համատեղ նիստում:

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Առաջին գլխում- «Ամին առ-Ռեյհանիի ժամանակաշրջանը (1850-1950), հեղինակը համառոտ կերպով եւ ընդհանուր գծերով տալիս է արաբական

երկրների պատմության այդ ժամանակաշրջանի պատկերը: Արաբական երկրները, որոնք 16-րդ դարից գտնվում էին օսմանյան տիրապետության տակ, տնտեսապես քայքայվել էին, նրանց երբեմնի բարձր մշակույթը անկում էր ապրում: Ոտնահարվում էր արաբի ազգային արժանապատվությունը, նա արհամարհված էր եւ ենթակա ազգային հալածանքների ու բռնի թուրքացման, որն իր գագաթնակետին հասավ արյունարբու սուլթան Աբդուլ Համիդ 2-ի եւ երիտթուրքերի տիրապետության տարիներին (1876-1918):

Սակայն 19-րդ դարի կեսերից արաբական հասարակության ներսում, առաջին հերթին Սիրիայում, Լիբանանում եւ Եգիպտոսում, տեղի ունեցավ ազգային-մշակութային զարթոնք, որը մեծ խթան հանդիսացավ արաբների ազգային ինքնագիտակցության արթնացման եւ ազգային, քաղաքական, սոցիալական եւ մշակութային պահանջների ձեւավորման համար:

Մի խումբ քրիստոնյա արաբ ազգային-մշակութային գործիչներ Արաբական Արեւելքի զարգացման բազմաթիվ կնճռոտ հիմնահարցերի լուծման ելքը գտնում էին արեւմտյան քաղաքական մտքի մեջ: Նրանք կոչ էին անում անցնել աշխարհիկ կյանքի, կրոնը անջատել քաղաքականությունից: Այդպիսի գաղափարներ առաջ քաշեցին Ֆրանսիս Մառաշը, Չաբրաիլ Դալլալը, Ռզգալլա Հասունը, Շիբլի Շումեյլը, Ֆարահ Անտունը եւ ինքը Ամին առ-Ռեյհանին:

19-րդ դարի 2-րդ կեսում տեղի ունեցան արաբների բազմաթիվ ազգային ընդվզումներ, որոնց նպատակն էր թուրքական ճորտացումից ազատագրվելը: Ստեղծվեցին արաբական բացահայտ ու գաղտնի ընկերություններ ու ակումբներ, կազմավորվեցին լեգալ եւ անլեգալ քաղաքական կուսակցություններ, որոնց ծրագրերը պահանջում էին բարենորոգումներ սնցկացնել արաբական նահանգներում:

Արաբների նորագույն շրջանի պատմության մեջ կարեւոր իրադարձություն էր 1916թ. արաբական ապստամբությունը Օսմանյան կայսրության դեմ, որը խոշոր հետք է թողել Ամին առ-Ռեյհանիի ազգային-քաղաքական հայացքների ձեւավորման վրա:

Չնայած 1918թ. Օսմանյան կայսրությունը դադարեց գոյություն ունենալուց, սակայն արաբական երկրները, նշվում է այս գլխում, չհասան անկախության եւ որպես ենթամանդատային տերիտորիաներ անցան Անգլիայի եւ Ֆրանսիայի տիրապետության ներքո: Արաբական միասնական հայրենիքը մասնատվեց, որը շատ ծանր էր տանում Ամին առ-Ռեյհանին: Եվ նա այդպես էլ չտեսավ արաբական երկրների կողմից իրենց անկախության նվաճումը:

Ահա այսպիսի ազգային-քաղաքական մթնոլորտում է ընթացել Ամին Ռեյհանիի կյանքն ու գործունեությունը: Նա իր դարաշրջանի ծնունդն էր եւ նրա հայացքները ձեւավորվել են իր սիրելի արաբ ազգի առջեւ կանգնած խնդիրներից, նրան օտար լծից ազատագրված, լուսավորյալ եւ առաջադեմ ազգ տեսնելու պահանջներից:



Երկրորդ գլխում «Ամին առ-Ռեյհանին եւ արաբական հասարակական-քաղաքական հոսանքները», քննարկվում են արաբական տարբեր քաղաքական հոսանքների բնույթը, ուղղությունը եւ նրանց ազդեցությունը Ամին առ-Ռեյհանիի մտածելակերպի վրա:

Ամին առ-Ռեյհանիի, որպես անձնավորության եւ ազգային-հասարակական գործչի, վրա մեծ ազդեցություն են ունեցել տարբեր հասարական-քաղաքական հոսանքներ, որոնք ձեւավորվեցին դեռեւս 19-րդ դարի երկրորդ կեսին, իսկ մի քանիսն էլ ասպարեզ իջան 20-րդ դարում:

Հարցի ուսումնասիրությունը հայցողին հանգեցրել է այն եզրակացության, որ հոսանքների բնութագրման խնդրում արաբ հետազոտողների մոտ չկա միասնական տեսակետ: Որոշ հետազոտողներ, այդ թվում եւ ինքը, հայցողը, արաբական միջավայրում 19-րդ դարի երկրորդ կեսից մինչեւ 20-րդ դարի երկրորդ կեսը գոյություն ունեցած հոսանքները բաժանում են երեք խմբի՝ կրոնական, ազգային եւ մարքսիստական: Իսկ որոշ արաբ հետազոտողներ, ելնելով պատմական մատերիալիզմի հիմնադրույթներից, 20-րդ դարի 30-40-ական թթ. արաբական գաղափարական հոսանքները բաժանում են չորս մեծ հոսանքների՝ ավատատիրական (ֆեոդալական), խոշոր բուրժուական, մանր բուրժուական եւ սոցիալիստական:

Արաբ հայտնի հետազոտող Մունիր Մուսան, ուսումնասիրելով Սիրիայի նորագույն շրջանի արաբական միտքը, առաջ է քաշում քաղաքական եւ հասարակական ուղղությունների հետեւյալ դասակարգումը: 1. Լիբերալ-աշխարհիկ կամ ռադիկալ հոսանք: Ֆրանսիս Մառաշ, Ռզգալլա Հասուն (Հասունյան), Ադիբ Իսհակ (Զալմանյան), Շիբլի Շումեյլը եւ Ֆարահ Անտունը: Այս ուղղության ներկայացուցիչները պահանջում էին ստեղծել ժողովրդական իշխանություն եւ մի հասարակարգ, որտեղ բոլոր քաղաքացիները պետք է հավասար լինեն, կրոնը անջատել քաղաքականությունից, իսկ պետությունը կառուցել նորագույն գիտության, հայրենասիրության եւ ազգայնականության սկզբունքների վրա: 2. Իսլամական ռեֆորմիստական ուղղություն: Այն պահանջում էր կառչել օսմանյան խալիֆայությունից ու օսմանյան միությունից (Ջամալ ադ-Դին Աֆղանի, Մուհամմադ Աբդո եւ այլք): 3. Համաարաբական կամ ազգայնական-արաբական ուղղություն, որը ազգային եւ աշխարհիկ հողի վրա քարոզում էր ստեղծել մեկ արաբական ազգություն, արաբական միասնություն եւ պահանջում էր բռնի ուժով կամ էլ Ֆրանսիայի եւ Անգլիայի օգնությամբ անկախանալ օսմանյան կայսրությունից: Այս ուղղության լավագույն ներկայացուցիչն է Նագիբ Ազուրին, այնուհետեւ նրան միացան արաբ ազգայնականների մեծ մասը, այդ թվում եւ Ամին առ-Ռեյհանին: 4. Համաարաբական-իսլամական ուղղություն, որը առաջ էր քաշում արաբա-իսլամական ազգության գաղա-

փարը՝ «յուրաքանչյուր մահմեդական արաբ է» կարգախոսով:

Այս հոսանքների միջեւ գաղափարական մրցապայքար էր գնում, որը բացասաբար անդրադարձավ արաբական ազգային միասնության վրա: Այս հանգամանքը ազգային-մշակութային գործիչներին եւ լուսավորիչ մտածողներին մղեց հարձակվելու կրոնահամայնքային եւ դավանական հոսանքների վրա՝ պահանջելով աշխարհիկ կյանք եւ ազգային միասնություն: Նրանցից մեկն էր նաեւ Ամին առ-Ռեյհանին, որը խիստ քննադատության ենթարկեց կրոնա-համայնքային ուսմունքները եւ պաշտպանեց ազգայնականությունը ու արաբական միասնությունը:

Երրորդ գլխում - «Ամին Ռեյհանիի հայացքները ապագա արաբական արդարացի հասարակության կառուցման վերաբերյալ», լուսաբանվում է հարցերի մեծ շրջանակ:

***1. Ռեյհանիի գրական-հասարակական ուղին.***

Ամին Փարես առ-Ռեյհանին ծնվել է 1879թ. Լիբանանի ալ-Մաթն գավառի ալ-Ֆուրեյքա գյուղում: 1886թ. նա հաճախել է Ֆրանսիական միսիոներական դպրոց: 12 տարեկան հասակում պատանի Ռեյհանին իր հորեղբոր ուղեկցությամբ մեկնում է Նյու-Յորք (ԱՄՆ), եւ այստեղ շարունակում է իր ուսումը: 1897թ. նա ընդունվում է Նյու-Յորքի Կոլումբիայի համալսարան: Նա ուսումնասիրում է Ֆրանսիացի, անգլիացի եւ ամերիկացի հեղինակների ստեղծագործությունները: Ֆրանսիացի մեծ լուսավորիչների իդեալները ուղեցույց դարձան նրա համար: Գրականության միջոցով Ռեյհանին հայտնաբերեց Անգլիան եւ անգլիացիներին, մանավանդ Թոմաս Կարլայլի (1795-1881) երկերի միջոցով, որը խստագույնս քննադատում էր արեւմտյան բուրժուական հասարակությունը: Ռեյհանիի կրթության բաղադրատարրերից պետք է նշել նաեւ ծանոթությունը ամերիկյան հասարակական մտքի եւ բարոյական նորմերի հետ: Նա ծանոթ է եղել հայտնի ամերիկացի բանաստեղծ Ռալֆ Էմերսոնի (1803-1882) գաղափարներին, որը իդեալիստական դիրքերից քննադատել է կապիտալիզմի թերությունները:

1904թ. վերջնականապես Լիբանան վերադառնալուց հետո, Ռեյհանին ապրեց եւս 36 տարի, որի ընթացքում նա մի շարք գրական-հրապարակախոսական աշխատություններ է տպագրել արաբական եւ անգլիական մամուլում, մասնակցել է գրական ակումբների աշխատանքներին, հանդիպել ու զրուցել է արաբ թագավորների, իշխանների ու նախարարների հետ, կոչ արել նրանց հանուն միաբանության, ազգության զարգացման եւ լուսավորության գործի բարելավման:

Ամին Ռեյհանին իր առաջ խնդիր էր դրել հետեւողականորեն պայքարել եւ մարդուն ազատագրել կրոնական մոլեռանդության կապանքներից, տգիտությունից, եւ մարտնչել արեւմտյան քաղաքակրթության լավագույն նվաճումները արեւելքում ներդնելու, եւ արեւելքի մշակույթի լավագույն նվաճումները արեւմուտք արտածելու համար:



Ռեյհանիի անձնական կնիքի վրա փորագրված էր. «Ուժը ճշմարտության հետ է, իսկ ճշմարտությունը չի մեռնում»: Եվ նա մինչեւ իր կյանքի վերջը ազնվորեն ծառայեց ճշմարտությանը:

***2. Կրոնական գործոնների եւ աշխարհիկ ռացիոնալ ուսմունքների արտացոլումը Ռեյհանիի ստեղծագործությունների մեջ:***

Նա արեւմտյան ռացիոնալիզմի եւ լուսավորության դիրքերից մերկացրել է եկեղեցական կարգերը եւ բարքերը, ցույց տվել, որ կրոնական խավարամոլությունը արգելակել է արաբական գիտական զարթոնքը եւ առաջընթացը:

Իր առաջին հոդվածներից մեկում «Ռեֆորմացիայի ուղին» (1898թ.) Ռեյհանին անողոք մերկացնում է կրոնական մոլեռանդությունը եւ այն համարում արաբ ժողովրդի հետամնացության եւ անկման գլխավոր պատճառներից մեկը:

1902թ. «ալ-Հուդա» թերթում տպագրված «Ընդունակությունը եւ ոչ թե բարեկամությունն է ամրապնդում պաշտոնը», Ռեյհանին նշում է, որ պետական պաշտոններ հատկացնելիս պետք է ղեկավարվել ոչ թե կրոնահամայնքային կամ դավանական պատկանելության, այլ ընդունակության եւ որակավորման չափանիշներ: Ընդորում նա մերժում է եկեղեցու միջամտությունը պետության գործերին: Այդ կապակցությամբ Ռեյհանին գրում է. «Եթե կղերականությանը վստահենք պետական նավի ղեկը, ապա վաղ թե ուշ այդ նավը բախվելու է մոլեռանդության ժայռին, մարդկանց հոգիները խորտակվելու են անձնական նկրտումների եւ կրոնա-համայնքային բարդությունների մեջ»:

Աշխարհիկության ըմբռնումը Ռեյհանիի մոտ անորոշ գաղափար չէր, այլ գիտականորեն ծրագրավորված եւ հիմնավորված մոտեցում: Նա համոզված էր, որ ազգային միասնության ճանապարհին խոչընդոտող քարը կրոնական խմբակայնությունն է: Նրա կարծիքով ազգային հայրենասիրությունը պետք է վեր դասել կրոնական անհանդուրժողականությունից:

Ըստ նրա, Արաբական Արեւելքի երեք հիվանդություններն են՝ քաղաքական դժբախտությունը, նյութական աղքատիկ դրությունը եւ հասարակական պառակտումը: Դրանից բուժման միջոցներ են ռեֆորմացիան, զարթոնքը եւ լաիցիզմը: Սակայն վերջին հաշվով քաղաքացիական հասարակության ստեղծումը:

Ռեյհանիի ռացիոնալ հայացքների մեջ մեծ տեղ է գրավում տիեզերքի հավասարակշռության «եռյակ» սկզբունքը կամ երեք տարրերի օրենքը: Նա գտնում էր, որ կեցությունը կազմված է երեք տարրերից՝ «ծագում, զարգացում, եւ անկում», իսկ մարդը՝ մարմին, բանականություն եւ հոգի: Կեցության ու գիտակցության փիլիսոփայական առաջնայնության խնդիրը Ռեյհանին լուծում է հօգուտ գիտակցության, սակայն մյուս կողմից էլ, խորամուխ լինելով տիեզերքի եւ բնության հսկա ուժերի մեջ, նա հանգել է հո-

ռեպեսական եզրակացությունների, թե անհնար է հասնել կեցության գաղտնիքներին: Այդ իսկ պատճառով Ռեյիանին երբեմն ինքն իրեն անվանում է «մատերիալիստ-իդեալիստ» իսկ հաճախ պարզապես՝ իդեալիստ:

Ռեյիանին գաղափարապես ազդվել էր տարբեր ուղղություններից, այդ իսկ պատճառով նրա մտքերը երբեմն հակասական են: Սակայն նա իր էությամբ հակված էր դեպի իդեալները եւ հոգեւոր արժեքները, որոնք Ռեյիանին համարում էր մարդու եւ մարդկային հասարակությունների զարգացման հիմքը:

*3. Իդեալական հասարակության հիմքերի ու նպատակների ըմբռնումը Ռեյիանիի մոտ:*

Արաբ գրողի ըմբռնումները իդեալական հումանիստական հասարակության կառուցման մասին արտահայտված են հետեւյալ բանաձեւի մեջ. «Մարդու բարեփոխությամբ կայանում է ազգության վերակառուցումը, իսկ ժողովրդի վերափոխությամբ, դաստիարակությամբ կայանում է ղեկավարների եւ կառավարիչների դաստիարակությունը»:

Այս կապակցությամբ Ռեյիանին առաջ է քաշել ուշագրավ գաղափարներ՝ մարդու բարոյական մաքրագործության եւ հոգեկան գեղեցկության մասին: Նրա ուտոպիստական պատկերացումները իդեալական հասարակության մասին ներկայացած են «Մեծ քաղաքի» տեսքով: Ռեյիանիի «Մեծ քաղաքը» կամ նրա պլատոնական «հանրապետության» մյուս բոլոր քաղաքներից տարբերվում է իր ականավոր անհատներով, բանաստեղծներով, գիտնականներով եւ արվեստի գործիչներով: «Մեծ քաղաքը» դա այն քաղաքն է, որը մեծարում է իր հերոսներին եւ ականավոր մարդկանց ոչ թե արձաններ կանգնեցնելով նրանց, այլ հետեւելով նրանց պատվիրաններին, եւ որի դատավորների վճիռները բարեգութ են եւ արդար: Դա այն քաղաքն է, որտեղ ստրուկներ չկան եւ ժողովուրդը միասնաբար հանդես է գալիս կառավարիչների բռնության դեմ: Այնտեղ յուրաքանչյուր մարդ իր անձի սուլթանն է (տիրակալը), իսկ կառավարիչները՝ ժողովրդի ծառաները: «Մեծ քաղաքում» խոսքի եւ գործի ազատություն է տիրում, գիտության եւ մշակույթի բոլոր ճյուղերը զարգանում են, կինը օգտվում է որոշակի ազատություններից եւ նրա արժանապատվությունը չի վիրավորվում: Դա այն քաղաքն է, որտեղ խոսքով եւ գործով հաղթանակ է տանում ճշմարտությունը, գերիշխում է հավասարությունը, ազատությունը, եղբայրությունը: Այնտեղ հոգեւոր ուժերը հաղթում են նյութական ուժերին:

Ռեյիանին «Մեծ քաղաքի» օրինակով երեւակայական իդեալական հասարակություն է պատկերացրել:

Թեեւ 1920թ. Նյու-Յորքում «1950 թվականը» խորագրով գրած հոդվածում Ռեյիանին փառաբանում է ժողովրդական հեղափոխությունները, միապետական կառավարությունների տապալումը եւ սոցիալիզմի հաղթանակը, սակայն «հեղափոխություն» ասելով նա նկատի ունի «հոգեւոր հեղափոխությունը», «բարոյաէթիկական հեղափոխությունը»:

Ռեյիանին խորապես համոզված էր «ընդհանուր եւ լիակատար եղբայրության թագավորության» կայացման հնարավորության մեջ՝ խաղաղ, դաստիարակչական աշխատանքի, բարոյական կատարելության եւ ինքնադաստիարակման միջոցով:

Իդեալական հասարակության մասին Ռեյիանիի ծրագիրն իր իսկ խոստովանությամբ երազ է, որն անհնար է կենսագործել բռնի ուժով, ճնշմամբ եւ այլ միջոցներով: Իդեալական հասարակության կայացմանը հասնելու եղանակը Ռեյիանին 1935թ. ամփոփել է հետեւյալ ձեւով. «Իմ նպատակն է այս կյանքում ջանքեր թափել՝ թե՛ գրավոր, թե՛ բանավոր եւ թե՛ աշխատանքով մարդուն ազատագրելու համար տգիտության, աղքատության եւ վախի շղթաներից, մարդկության ցավերը թեթեւացնել...: Այդ նպատակին հասնելու իմ մեթոդն է ազատ միտքը, ազատ խոսքը, որը զերծ է ամեն տեսակ կուսակցականությունից, մոլեռանդությունից, անձնական նկրտումներից»: 4. Ռեֆորմիստական սոցիալիզմի եւ սոցիալական արդարության ըմբռնումը Ռեյիանիի մոտ: Արդարության ըմբռնումը Ռեյիանիի մոտ հիմնված է հումանիզմի գաղափարների վրա եւ հավատքը առ այն, որ երջանկությունը բոլոր մարդկանց իրավունքն է: Նրա հիմնադրույթների մեջ ուշադրություն է գրավում անհավասարության, մարդկանց միջեւ բարիքների ու հարստությունների անհավասար բաշխման վերացման պահանջը, գտնելով, որ դա սոցիալական անհավասարության ու հասարակական բոլոր չարիքների պատճառն է: Դրա հետ միասին Ռեյիանին շեշտում է, որ «մարդիկ հավասար չեն ծնվել մտավոր-գաղափարական, մարմնական եւ հոգեւոր կարողություններով»: Ուստի անհավասարությունը պետք է դրսեւորվի այդ ձեւով եւ յուրաքանչյուր մարդ պետք է գիտակցի իր դիրքը եւ վարձատրվի իր աշխատանքի համար, «եւ սա էլ, ըստ իս, նշում է Ռեյիանին,-իսկական հավասարությունն է»:

«1950 թվականը» խորագրով հոդվածում Ռեյիանին գովերգում է դեմոկրատական սոցիալիզմը եւ նրա երեք հիմնական սկզբունքները. առաջինը, բոլոր մոնոպոլիստական ընկերությունների վերացում, երկրորդ, առեւտրական եւ ֆինանսական ընկերությունների եւ նրանց անդամների եկամուտների չափի սահմանում, երրորդ, յուրաքանչյուր նահանգում գլխավոր գործակալության հիմնադրում, որի ստացված եկամուտները ծախսել հասարակական ծրագրերի, գիտական, արվեստագիտական եւ առողջապահական հաստատությունների վրա:

Նույն հոդվածում Ռեյիանին գրում է. «Բանվորների իշխանությունը մարդկային իշխանությունների չորրորդ օղակն է կազմում... հայրիշխանության ժամանակ կառավարել են իմաստուն մարդիկ, միապետական իշխանության ժամանակ կառավարել են ինքնակալ թագավորները, սահմանադ-

րական իշխանության ժամանակ կառավարել են անվանի մարդիկ եւ հարուստները, իսկ սոցիալական իշխանության ժամանակ՝ բանվորները»:

Այլ տեղում Ռեյհանին խոսում է կապիտալի մասին, թե ինչպես սեփական շահերի համար մոնոպոլիաները պատերազմներ են սանձազերծում, թեկուզ դրանք նպաստեն երկրագնդի կործանմանը:

Ռեյհանին խստորեն դատապարտում է այն «դժոխքը», որը դրամատերը ստեղծել է ժողովրդի համար՝ գաղտնի դաշնակցելով «վեհաշուք օրենքի» հետ, օգտագործելով նաեւ պետության ուժը:

Անդրադառնալով ամերիկյան «ազատ ու անկախ հանրապետության» (1906թ.), նա նշում է, որ «արդարությունը եւ հավասարությունը» սոսկ կարգախոսներ են, իրականում այստեղ արհամարհվում են ժողովուրդը եւ աղքատ խավերը, որոնց կյանքն ու գոյությունը առանձնապես չի հուզում կապիտալիստներին: Իրականում ամեն ինչ կատարվում է հանուն կապիտալի:

Սոցիալական արդարության ու հավասարության, սոցիալիզմի, վերափոխության մասին Ռեյհանիի գաղափարները ձեւավորվել են ռեֆորմիստական սոցիալիզմի տեսաբանների, ֆրանսիացի ուտոպիստների, ինչպես նաեւ Եվրոպայում գաղափարախոսական եւ քաղաքական արագ փոփոխությունների ու ընթացող իրադարձությունների ազդեցության, հատկապես, 1917թ. Ռուսաստանում տեղի ունեցած հեղափոխության ներքո:

Ծագման ու զարգացման օրենքի (Էվոլուցիայի տեսության) մասին Ռեյհանիի պատկերացումների համաձայն, մարդկության հասարակական-քաղաքական զարգացման փուլը կվերջանա սոցիալիստական հասարակարգով:

1920թ. Ամին առ-Ռեյհանին հրատարակեց «Բոլշեվիզմի փլուզումը» աշխատությունը, որի մեջ նա դատապարտեց բոլշեվիկների գործադրած բռնությունները, պրոլետարիատի դիկտատուրան, նոր հասարակարգ կառուցելու համար հին հասարակարգի լիակատար վերացումը եւ այլն: Նա որպես ռեֆորմիստական սոցիալիստ հավատում էր հավասարության, սոցիալական արդարության եւ դասակարգային խաղաղության հիման վրա կառուցվող հասարակությանը եւ գտնում, որ բանվորները բարձրացնելու են ոչ թե կարմիր, այլ սպիտակ դրոշներ եվրոպական բոլոր մայրաքաղաքներում:

Եթե փորձենք օբյեկտիվորեն ներկայացնել Ռեյհանիի սոցիալիստական- հումանիստական հայացքները, ապա նրան պետք է դասել սոցիալուտոպիստների շարքը: Եվ ինչպես ճիշտ նշել է Ի. Լեւինը, Ռեյհանիին պակասում էր հասարակության զարգացման օրենքների մասին գիտական հավաստի պատկերացումը:

Չորրորդ գլխում - «Ռեյհանիին եւ արաբական միասնության խնդիրը», ատենախոսության հեղինակը քննում է Ռեյհանիի դիրքորոշումը արաբական միասնության հարցում եւ ցույց է տալիս, որ այն սերտորեն կապված է 19-րդ դարի վերջի եւ 20-րդ դարի սկզբի արաբական ազգային հոսանքների ձեւավորման հետ:



19-րդ դարի սկզբին արաբական ազգության կամ ազգայնականության գաղափարը հստակորեն առաջ է քաշվել Նաջիբ Ազուրիի կողմից, որը, թերեւս, առաջին անգամ այն դրեց գիտական ու մեթոդաբանական ճիշտ հիմքերի վրա: Արաբական ազգայնականության (նացիոնալիզմի) գաղափարը դրսեւորվել է երկու պարզ հոսանքների ձեւով: Առաջին հոսանքը արաբական աշխարհիկ հոսանքն էր, որը ղեկավարում էին լիբանանցի այնպիսի քրիստոնյա գործիչներ, ինչպիսիք են Բուտրոս ալ-Բուսթանին, Իբրահիմ ալ-Յազիջին եւ ուրիշներ: Իսկ երկրորդ հոսանքը՝ կրոնա-իսլամական հոսանքն էր, որի ներկայացուցիչները պահանջում էին իսլամական խալիֆայությունը վերադարձնել արաբներին (Ա. Քավաքիբին) եւ վերականգնել արաբա-իսլամական ազգությունը (Ջ. ալ-Կասիմին):

Իրականում Նաջիբ Ազուրին այդ գաղափարներից էլ մի քայլ առաջ էր անցել եւ պահանջում էր վերականգնել արաբ ազգությունը եւ ստեղծել անկախ արաբական պետություն, խարսխված ազգայնականության ու նոր, աշխարհիկ հիմքի վրա:

Ամին Ռեյհանին ոչ միայն որդեգրեց հենց այս ազգայնական ուղղության գաղափարները, այլեւ նախորդ քաղաքական գործիչներից մի քայլ առաջ ընկավ: Ազգային գաղափարը Ռեյհանիի մոտ ազգային հոգու այն հիմնաքարն է, որը խարսխված է երեք գլխավոր հիմնասյուների վրա՝ ազգային լեզու (արաբերեն), ազգային պատկանելության ինքնագիտակցում եւ ազգային-քաղաքական շահեր: Ազգային գաղափարը, ըստ Ռեյհանիի, առավել կարեւորություն է ձեռք բերում, քանզի այն համարվում է արաբական զարթոնքի հիմքը, ոգին եւ նպատակը: Արաբների պառակտվածությունը հաղթահարելու միակ միջոցը ազգային գաղափարն է, ազգային ինքնագիտակցությունը: Այնտեղ ընդգծված է այն միտքը, որ ազգային գաղափարը այն կապող օղակն է, որը միավորում է ազգային շահը, այն ճանապարհն է, որը տանում է դեպի միասնություն:

Արաբական ազգայնականության մյուս առանձնահատկությունը նրա աշխարհիկությունն է, որը ամրապնդում է նրա ազատագրական բնույթը: Ազգայնական գաղափարը նախատեսում է քաղաքակրթական, իրավական եւ սահմանադրական ըմբռնումների վրա հենվող քաղաքացիական հասարակություն:

Արաբական միասնությունը, ըստ Ռեյհանիի, հստատուն իրողություն է, արաբների հզորության աղբյուրը, նրանց ապագայի հենարանը եւ պայքարի առանցքը: Եթե արաբների մասնատվածությունը գաղութատիրության կողմից պարտադրված եւ նրանց ներքին գործերին միջամտելու արդյունքն է, ապա արաբական միասնությունը այն բնական վիճակն է, որի մեջ

պետք է լինի արաբ ազգությունը:

Ռեյհանին ապացուցում էր, որ արաբները ունեն մեկ ասված՝ ալլահը, մեկ ընդհանուր լեզու եւ գրականություն, ընդհանուր սովորույթներ եւ ավանդույթներ, ընդհանուր կենցաղ, թերություններ, առաքինություններ, հոգեւոր սնունդ եւ բնական սահմաններ, եւ ընդհանուր քաղաքական եւ տնտեսական ճակատագիր: Եվ այս իրողությունը նա աշխատել է հասցնել արաբների գիտակցությանը, հասկացնել, որ արաբների տարածքի ամբողջականությունը եւ երկրի անկախությունը պատմական անհրաժեշտություն է եւ արաբական աշխարհը պետք է լինի մեկ միասնական հայրենիք, առանց օտար միջամտությունների: Ռեյհանին հատուկ ուշադրություն է հրավիրել միասնության գործում տնտեսակսն գործոնի վրա, որը, ըստ նրա, մեծ նշանակություն է ձեռք բերում ազգային զարթոնքի, արդյունաբերական, առեւտրական եւ գյուղատնտեսական զարգացման տեսանկյունից:

Նրա կարծիքով գաղութարարները արաբական աշխարի կարող են թափանցել, իրենց պրոտեկտորատը եւ ազդեցությունը պարտադրել միայն արաբական աշխարհի մասնատվածության պայմաններում:

«Բաժանիր, որ տիրես» հայտնի քաղաքականության դեմ Ռեյհանին արաբներին առաջարկում է համախմբվածություն եւ միասնություն, եւ միայն դրա մեջ է տեսնում արաբների ուժը:

Այս բոլորից հետո հարց է առաջանում, թե ինչու չիրագործվեց արաբական միասնությունը: Այս հարցի պատասխանը տրված է Ռեյհանիի ուսումնասիրությունների եւ դիտարկումների մեջ: Ըստ նրա, արաբների միասնությունը մի ուժ է, որը առաջին հերթին հակասում է արեւմուտքի շահերին: Ըստ այդմ էլ եվրոպացի գաղութարարները՝ անգլիացիները եւ ֆրանսիացիները, որակվել են որպես արաբական ազգության եւ արաբական միասնության ոխերիմ թշնամիներ: Նրանց գաղութատիրական դիրքորոշումները ի հայտ եկան արաբական երկրների մասնատման, բաժանման եւ զրավման մեջ: Այդ գաղութարարները քաջալերեցին էթնո-համայնքային երկպառակությունները, բորբոքեցին հակասությունները եւ հակամարտությունները, որպեսզի վիժեցնեն արաբական միասնությանը ուղղված ծրագրերը: Իսկ արաբ կառավարիչները եւ էմիրները պաշտպանեցին իրենց տեղայնական շահերը, անձնական, ցեղային, համայնքային նպատակները: Դրանով իսկ նրանք դարձան արաբական միասնության ներքին թշնամիները: Այս կապակցությամբ Ռեյհանին հանգել է այն եզրակացության, որ գաղութատիրության եւ արաբական բուրժուական, ավատատիրական, համայնքային ու ցեղային հատվածների շահերը կապված են միմյանց հետ՝ արաբական միասնությունը մերժելու եւ դրան դիմադրություն ցույց տալու հարցում:

Արաբների մասնատվածության հիմնահարցը եւ միացյալ արաբական



պետություն հիմնելու խնդիրը լուծելու նպատակով Ռեյհանին առաջարկում է հետեւյալը. կրոնը անջատել քաղաքականությունից եւ աշխարհիկացնել պետությունը: Քանի որ միասնությունը անկարելի է իրագործել միանգամից, անհրաժեշտ է այն կենսագործել փուլ առ փուլ, աստիճանաբար, վերացնել մրցակցության եւ տարաձայնությունների պատճառները եւ պահպանել հավատը միասնության անխուսափելիության նկատմամբ: Սա հաստատվում է Ռեյհանիի հետեւյալ բանաձեւումով. «Ոչ թե կրոնի, այլ ազգային գաղափարի վրա հիմնված արաբական միասնությունն է սրբազան միասնություն, իմացեք, որ արաբները ոչ փառավոր ապագա եւ ոչ էլ լիակատար հզոր միասնություն կունենան, առանց իրավունքների եւ պարտականությունների հարցում արդարության վրա հիմնված քաղաքացիական, դեմոկրատական իշխանության հաստատման»:

Ռուսական արեւելագետ Լեւինը, գնահատելով Ռեյհանիի դիրքորոշումը արաբական միասնության հարցում, գրել է. «Ռեյհանիի մեծությունը եւ կարեւորությունը երեւում է նրանից, մասնավորապես, որ նա քչերի մեջ առաջիններից մեկն էր, որոնք ավետեցին, համառորեն եւ մեծ վճռականությամբ պայքարեցին ու անսասան մնացին ազգային միասնության խորհրդանիշին, ընդ որում, այնպիսի փուլում, որին բնորոշ է մասնատվածությունը եւ տրոհվածությունը, եւ այն էլ այնպիսի ժամանակ, երբ մարդիկ իրենց ավելի շատ համարում էին ոչ այնքան սիրիացիներ, որքան դամասկոսցիներ...»:

Հինգերորդ գլխում՝ «Ռեյհանին որպես բանագնաց Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ», հեղինակը անդրադառնում է արաբ մտավորականի միսիային:

Որպես բանագնաց Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ, նա երկուսից էլ վերցնում է լավագույնը եւ փորձում հերքել այն սխալ եւ միակողմանի կարծիքները, թե յուրաքանչյուրը կազմել է մեկը մյուսի մասը: Արեւմուտքը Արեւելքի մեջ տեսնում է զգացմունքներ, ճահճացում եւ բռնակալություն, իսկ Արեւելքը Արեւմուտքի մեջ տեսնում է աթեիզմ, նյութականություն, ամբարտավանություն եւ տիրապետության երեւույթներ, որոնք առաջ են բերել պատերազմներ եւ այլ աղետներ:

Ռեյհանին փորձել է փոխադարձ հարգանքի վրա հիմնված հաղորդակցության եւ կապի կամուրջ գցել Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ: Երբ Արեւելքը Արեւմուտքից վերցնի տեխնիկայի ոգին, ապա կարող է դրանով լուծել իր հասարակական եւ նյութական հիմնախնդիրները: Իսկ երբ Արեւմուտքը գնահատի Արեւելքի հոգեւոր արժեքները, ապա կօգտվի դրանից՝ իր բարոյական եւ հոգեւոր անկումը բուժելու համար:

Ռեյհանին ուրվագծում է մի քաղաքակրթություն, որը ոչ արեւելյան է եւ ոչ էլ արեւմտյան: Երկուսից էլ փոխառնում է լավագույն արժեքները: Արեւելքից վերցնում է հոգին, բարոյականությունը եւ կրոնը, իսկ Արեւմուտքից՝

գիտությունները, արդյունաբերությունը եւ աշխատանքը, եւ ստեղծում է հումանիստական քաղաքակրթություն:

Արեւելքի եւ Արեւմուտքի մերձեցման խոչընդոտները Ռեյհանին տեսնում է կրոնի եւ գիտության պայքարի, հոգեկանի եւ նյութականի հակամարտության մեջ: Սակայն այդ հակամարտությունը բացարձակ չէ: Արեւելքը չպիտի մեկուսանա ու զրկվի արեւմտյան գիտության նվաճումներից, այլ պետք է օգտվի այդ նվաճումներից ինքնազարգացման եւ զարթոնքի համար: Մյուս կողմից, դատապարտելով արեւմուտքի գաղութատիրական քաղաքականությունը եւ արեւմտյան մարդկանց «ստամոքսի եւ դրամի» պաշտամունքը Ռեյհանին, Արեւմուտքի հիմնահարցերի բուժումը տեսնում է Արեւելքի բարոյական եւ հոգեւոր արժեքների մեջ:

## ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Ամին Ռեյհանին մեծ տեղ է գրավում արաբական գրականության եւ հասարակական մտքի պատմության մեջ: Ակնառու է այն ազդեցությունը, որ նա թողել է կրթության, դաստիարակության, ազգային միասնության, հավասարության, հանդուրժողականության եւ հասարակական այլ խնդիրների բնագավառում: Նրա գաղափարները հարատեւում են մինչեւ օրս:

Արաբական հասարակության մեջ Ռեյհանիի խաղացած դերը կարելի է ամփոփել հետեւյալ կետերի մեջ.

1. Ռեյհանին համարձակորեն պաշտպանել է արաբների ազգային-ազատագրական պայքարը եւ արաբների անկախությունը՝ արաբական միասնության շրջանակներում:
2. Բացահայտորեն հանդես է եկել կրոնը պետությունից անջատելու եւ արաբական աշխարհիկ հասարակություն կառուցելու պահանջով:
3. Դատապարտել է շահագործումը եւ պահանջել բարիքների արդար բաշխում, որը վկայում է սոցիալիստական միտումների գոյության մասին նրա աշխարհայացքում:
4. Շեշտել է անհատի եւ հասարակության կյանքում ազատության եւ ժողովրդավարության անհրաժեշտությունը: Սակայն նրա մոտ ժողովրդավարության հասկացողությունը ավելի շատ հումանիստական բովանդակություն ունի, քան քաղաքական ուղղություն:
5. Քարոզել է եղբայրություն, հավասարություն, արդարություն, խաղաղություն, ընդգծել Արեւելքի եւ Արեւմուտքի մերձեցման անհրաժեշտությունը եւ նրանց լավագույն արժեքների միախառնումը նոր հումանիստական քաղաքակրթության

կաղապարում՝ հանուն մարդու երջանկության: Թեեւ Ռեյհանիի վերոհիշյալ գաղափարները եւ դիրքորոշումները կարեւոր են եւ առաջադիմական, սակայն դրանք հաճախ տառապում են հակասականությամբ եւ ընդգծված



իդեալականությամբ: Այդ իսկ պատճառով, արաբ մեծ մտածողի առաջարկած որոշ լուծումները իրավական չեն: Այսուհանդերձ, դա չի կարող նսեմացնել Ռեյհանիի ճշմարիտ հայացքների, խիզախ դիրքորոշումների եւ գործադրած ջանքերի պատմական նշանակությունը:

Ատենախոսության հիմնական դրույթները արտացոլված են հետեւյալ հրապարակումներում.

1. Ամին առ-Ռեյհանին որպես փիլիսոփաների գրականագետ եւ գրականագետների փիլիսոփա. Ռեյհանիի մտահորիզոնի գնահատման նոր դիտարկումներ եւ հետքեր արաբական հասարակության մեջ, «ալ-Ջամահիր», 1994, նռ.6, Դամասկոս, էջ 12-21 (արաբերեն):
2. Ամին առ-Ռեյհանիի ուղեւորությունները Արաբական Արեւելք, «Թիշրին», 1994, նռ.3, Դամասկոս, էջ 7-18 (արաբերեն):
3. Ռեյհանին եւ արաբական միասնության խնդիրը, «ադ-Դադ», 1995թ. նռ.7, Հալեպ (ընդունված է հրապարակության):

МИРО МУХАММАД МУСТАФА

# Общественные и политические взгляды Амина ар-Рейхани

Общественные и политические взгляды видного классика новой арабской литературы, публициста и философа Амина ар-Рейхани (1876-1940) отражают многие ключевые явления, характеризующие арабское общество в последней четверти XIX-первой половине XX в. Это был период национально-культурного пробуждения арабского общества, которое в итоге привело к созданию национальной идеологии, различных идейно-политических течений, и в общей сложности к образованию современного арабского общества.

Целью диссертационной работы является освещение общественно-политических взглядов Амина ар-Рейхани, а также выявление роли различных политических учений в деле становления его мировоззрения. Изучение последного важно в первую очередь тем, что в мировоззрении Рейхани значительное место занимают идеи реформаторского социализма и социальной справедливости, определение корней и истоков идеального общества. Автор диссертационной работы ставит целью также освещение позиции Рейхани касательно проблем взаимопонимания и гармонии Восток-Запад, и исламской реформации, столь важных в современном мире.

Исследование общественно-политических взглядов Рейхани - первая в арабистике попытка подобного рода. Впервые показывается, что в литературном наследии Рейхани гармонично переплетены характерные Востоку духовные морально-этические ценности с характерными Западу передовыми рациональными



ценностями.

Источниковедческая база диссертационной работы состоит из произведений Амина ар-Рейхани, изданных на арабском и английском языках. Автор использовал труды арабских, европейских и советских историков и литературоведов - З.И.Левина, Х.Гиба, С.Уайлда, Ф.Хитти, К.Брокельмана, М.Мусы, Л.Саббаха, Н.Азури, Л.Хурани,С.Ибрахима, А. ад-Дури и других.

Во Введение обосновывается актуальность проблемы, цель и научная новизна, а также методические положения диссертационной работы.

В Первой главе ("Эпоха Амина ар-Рейхани") автор дает краткий очерк истории арабских стран в период с 1850 по 1950 гг. Характерной чертой первого периода данной эпохи истории арабского общества являлось усиление гонений арабских народов со стороны Османского правительства, особенно при султане Абдуль Гамиде П и младотурках (1876-1918), что дало сильный толчок национальному самосознанию арабов, пробуждению их национально-политических, социальных и культурных требований.

Во второй главе ("Амин ар-Рейхани и арабские общественно-политические течения") изучаются различные арабские политические направления и их влияние на мировоззрение Рейхани.

В Третьей главе освещается литературно-общественный путь Рейхани, отражение религиозных факторов и светских национальных учений в его произведениях.

В Четвертой главе ("Рейхани и проблема арабского единства ("Рейхани и проблема арабского единства") автор анализирует позицию Рейхани по проблеме арабского единства.

В Пятой главе ("Рейхани как посредник между Востоком и Западом") изучается оригинальная позиция Рейхани по вопросу о гармоничном развитии взаимоотношений между ближневосточными обществами и Западом. Рейхани считалб что эти отношения должны развиваться по принципу взаимного уваженияю Восток должен заимствовать у Запада развитую технологиюб а Запад уважает духовные ценности Востока.

В заключительной части представлены основные выводы

диссертационной работы:

1. Амин ар-Рейхан являлся сторонником арабского национально-освободительного движения в рамках арабского единства.

2. Он Выступал в пользу отделения религии от государства и сщздания светского арабского общества.

3. Осуждал эксплуатацию и требовал справедливого распределения материальных ценностейб что свидетельствует о присутствии социалистических тенденций в мировозрении Рейханию

4. Рейхани был сторонником свободы личности и обществаю

5. Рейхани проповедовал идеи братства, равенства, справедливости, мира, подчеркивал необходимость сближения Востока и Запада с целью соединения в одно целое их ценностей ради счастья человечества.

Диссертация представлена на соискание ученой степени кандидата исторических наук